<ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>

ՀՈԱԿ

2019թ.

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մանկապարտեզի տնօրեն Վարդուհի Հարությունյան

Ընդհանուր տեղեկատվություն մանկապարտեզի մասին

<ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> ՀՈԱԿ -ը իրավաբանական *անձի* կարգավիճակ ունեցող, շահույթ չհետապնդող համայնքային ոչ առևտրային կազմակերպություն է, իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նախադպրոցական ծրագրեր, կանոնադրությամբ ամրագրված իրավունքներ և պարտականություններ՝ հաստատված համայնքի ավագանու կողմից:

Մանկապարտեզի շենքը տիպային է, ունի երեք մասնաշենք, մեծ կանաչապատ բակային տարածք, երաժշտության դահլիճ:

<ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> ՀՈԱԿ-ում գործում է 4 խումբ: Մանկապարտեզում հաշվառված է թվով 140 երեխա, երեխաների միջին հաճախումը կազմում է թվով 123 երեխա:

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 26 հունվարի 2007թ. N 29-Ն հրամանի ՀՀ Պետական և Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակի մանկապարտեզի մանկավարժական անձնակազմը համալրված է համապատասխան բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող մասնագետներով՝ մեթոդիստ, դաստիարակ, երաժշտության դաստիարակ, ֆիզ. Դաստիարակ, պարուսույց:

Նախադպրոցական ուս. հաստատության աշխատանքը իրականացվել է հաստատության կանոնադրության և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան, ինչպես նաև հաստատության տարեկան աշխատանքային պլանին համապատասխան, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախադպրոցական կրթության համալիր ծրագրով:

Տարեկան նախատեսված կրթադաստիարակչական, ֆինանսատնտեսական և վարչատնտեսական աշխատանքների առաջնահերթ խնդիրները պլանավորվել են տնօրենի, մեթոդիստի և դաստիարակների աշխատանքային փաթեթներում:

Ֆինանսատնտեսական , առողջապահական, իրավական, օրենսդրական հաշվապահական, տնտեսական,աշխատանքները իրականացվել նամրագրվել են առողջապահական մատյաններում և ակտերում , իսկ կրթադաստիարակչական և ուսումնամեթոդական աշխատանքները , մանկավարժական և ծնողական խորհրդի նիստերում :

<ՎԵԴԻ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ> ՀՈԱԿ-ի

ուսումնադաստիարակչական աշխատանքների

առաջնահերթ խնդիրները

1. Կատարելագործել երեխայի ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքները կապված երեխաների առողջության ամրապնդման և հիվանդությունների նվազեցման հետ:
2. Կատարելագործել Մայրենի լեզվի ուսուցման ուղղությամբ տարվող աշխատանքները ավագ խմբում՝ շեշտը դնելով կապակցված խոսքի, հնչարտաբերման կարողությունների նախագիտելիքների ուսուցման վրա:
3. Կատարելագործել Էկոլոգիական դաստիարակության ուսուցումը մանկապարտեզում:
4. Բարելավել դպրոցի նախապատրաստմանն ուղղված աշխատանքները մանկապարտեզում:

1.1 Նախադպրոցական հաստատությունում երեխաների ֆիզիկական դաստիարակությունը նպատակաուղղված է նրանց առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ֆիզիկական զարգացմանը, ինչպես նաև շարժողական կարողությունների ու հմտությունների ձևավորմանը:
Ֆիզիկական դաստիարակության աշխատանքները կազմակերպելիս հաշվի է առնվել երեխաների տարիքային առանձնահատկությունները և ֆիզիկական զարգացման բնութագրիչները, քանի որ, մանկապարտեզում երեխաների յուրաքանչյուր տարիքային խումբ ունի ֆիզիկական զարգացման որոշակի մակարդակ, մտավոր գործունեության, կամային և հուզական գերիշխող հատկանիշներ:

2.2 Մայրենի լեզվի ուսուցման ուղղությամբ տարվող աշխատանքները ավագ խմբում

Մայրենի լեզվին տիրապետելը կապված է շրջակա միջավայրի ճանաչման հետ .

- Ծանոթացում շրջապատին, հասարակական կյանքի երևույթների և բնությանը .

Ավագ խմբի երեխաները կարողանում են ճանաչել առարկաների ոչ միայն հատկանիշները ու անունները, այլև գնահատել դրանց յուրահատկությունները, զգում են գրական ստեղծագործության բնույթը, տրամադրությունը, տարբերում դրանց ժանրային

առանձնահատկությունները, ձևը, հասկանում ձայնի հնչերանգը, սովորել են դատողություններ անել, հարցնել, պատասխանել, պատմել, վերապատմել, ստեղծագործել: Խմբասենյակում ստեղծված են երեխաների համար հարմարավետ առարկայական – զարգացնող միջավայր, համապատասխան դիդակտիկ պարագաներ, խաղեր, խաղալիքներ:

Մայրենի լեզվի ուսուցումը կազմակերպվել է բազմատեսակ և բազմաբովանդակ պարապմունքներով, որի հիմքում դրված է եղել մի խնդիր և նպատակ՝ մշակել երեխայի բանավոր խոսքը: Մանկապարտեզում կազմակերպվել են պարապմունքների հետևյալ տեսակները՝

1. Ոտանավորի ուսուցում և խորացում
2. Պատմումներ
3. Վերապատմում
4. Գեղարվեստական գրականության ընթերցում
5. Դիդակտիկ խաղ
6. Զրույց
7. Ինտեգրատիվ /միասնական, զուգորդված

3. Տարվա ընթացքում կատարելագործվել է էկոլոգիական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքները մանկապարտեզում.

Ծրագրին համապատասխան էկոլոգիայից նախատեսված է շաբաթական 1 պարապմունք: Բնության մեջ կազմակերպված պարապմունքների, էքսկուրսիաների, դիտումների, շրջապատի հետ շփման մեջ մտնելու շնորհիվ երեխաները ձեռք են բերել անձնական փորձ, որը նրանց սովորեցրել է հասկանալ իրենց տեղը բնության մեջ, նրանում վարքի նորմերի ճիշտ դրսևորում՝ ոչինչ չթանդելու, չապականելու, չտրորելու , այլ՝ տնկելու, ջրելու, խնամելու, կերակրելու անհրաժեշտություն: Տարվա ընթացքում կազմակերպվել են էկոլոգիական բնույթի խաղեր և բարոյահոգեբանական զրույցներ, որոնք նպաստել են երեխաների էկոլոգիական գիտակցության ձևավորմանը:

Անցկացվել են բարոյահոգեբանական զրույցներ, թե ինչպես պետք է լինի երեխայի շրջակա միջավայրը, բնության մեջ իրեն պահելու վարքի կանոնները, բնության օգտակարությունը, ինչպես նաև դրան վնաս հասցնելու հետևանքները թեմաներով:Անցկացվել են <Կանգնիր ծառի մոտ>, <կարմիր, կանաչ, դեղին տերևներ>, <Քամին և տերևները>, <Կուզվի, թե՝ կլողա>, <Օդում, ջրում, ցամաքում>, <Թանջարանոցում, այգում, ցամաքում> ծրագրով նախատեսված էկոլոգիական խաղերը:

- Ծրագրով նախատեսված էկոլոգիական դաստիարակությունը մանկապարտեզում իրականացվել է նաև արվեստի միջոցով, քանի որ արվեստի բոլոր ձևերը էկոլոգիական դաստիարակության համար լայն

հնարավորություն են ընձեռում: Կերպարվեստի, երաժշտության, գրականության, թատրոնի, բանդակագործության միջոցով երեխաները ծանոթացել են բնության երևույթներին, կյանքի գեղեցիկ, դրական և բացասական կողմերին:

- Երեխաները տոների, հանդեսների և զվարճալիքների միջոցով ծանոթացել են կենդանի և անկենդան բնության ձևերին

ՈՒՍՈՒՄՆԱԴՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ և ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Առաջնորդվելով 2019թ. Տարեկան աշխատանքային պլանով, մանկապարտեզում շաբաթական պարապմունքների գրաֆիկը ըստ տարիքային խմբերի տեղաբաշխվել է հետևյալ կերպ.

1. Ավագ խումբ – 14+1 պարապմունք
2. Միջին խումբ – 12 պարապմունք
3. Կրտսեր 2-րդ խումբ – 12 պարապմունք
4. Կրտսեր 1-ին խումբ – 10 պարապմունք

Տարեկան աշխատանքային գործընթացում իրականացվել են թվով 18 մեթոդ ժամեր, 6 թեմատիկ ստուգումներ, 12 սեմինար պարապմունքներ,ամենամսյա օպերատիվ ստուգումներ և դիտումներ:

Կատարվել է տարեկան աշխատանքային պլանով նախատեսված 4 մանկավարժական խորհրդակցության նիստեր/առկա է արձանագրությունները և համապատասխան զեկուցագրերը/

Տարվա ընթացքում կատարվել է տարվա միջոցառումների ժամանակացույցով պլանավորած 15 միջոցառում՝ տարիքային բոլոր խմբերում /Տյառնընդառաջ՝ քրիստոնեական և ժողովրդական տոն, Ծաղկազարդ, Մայրության և գեղեցկության տոն, Սուրբ Զատիկ, Մեծ հազթանակի տոն՝ Եռատոն, Հայաստանի Առաջին Հանրապետության օր, Երեխաների պաշտպանության օր, Գիտելիքի և դպրության օր, ՀՀ անկախության օր,

Անցկացվելեն օրինակելիպարապմունքներ բոլոր տարիքային խմբերում հետևյալ մեթոդիկաներից՝

Ավագ խմբում՝ Էկոլոգիա –«Ջուրը և նրա նշանակությունը» և <Բուսական աշխարհ> թեմայով, <Երթևեկության կանոնները>:

Միջին խմբում -Խոսքի զարգացում՝ <<Հացը>> թեմայով

Կրտսեր 2-րդ խմբում խոսքի զարգացում և նկարչություն <<Աշուն>> թեմայով

Կրտսեր 1-ին խմբում՝ խոսքի զարգացում << Գարուն>> թեմայով

Առաջին եռամսյակի ընթացքում կրտսեր խմբի երեխաները ծանոթացել են կերպարվեստային գործունեությանը՝ նկարչության, ապլիկացիայի, ծեփակերտման և դեկորատիվ կիրառական աշխատանքի հիմունքներին:

Երեխաները նկարչության ընթացքում սովորել են սեղանի շուրջ ճիշտ նստելու և թուղթը հարմար պահելու կարողություններին: Ծանոթացել են մաքուր գույներին՝ կարմիրին, կապույտին, դեղինին՝ նկարելով գունավոր օղակներ: Պատկերել են մի շարք թեմատիկ աշխատանքներ,նկարել են երևակայությամբ :

Ապլիկացիայի ընթացքում երեխաները ծանոթացել են թղթի մի քանի տեսակների, սոսնձի,մկրատի հետ: Երեխաները կատարել են թեմատիկ ապլիկացիաներ: Սովորել են քառակուսու մեջ կազմել նախշ, ձևավորել թաշկինակը:

Ծեփակերտման ընթացքում երեխաները ծանոթացել են պլաստիլինի և նրա հատկությունների հետ, որ այն փափուկ է, կարելի է բաժանել մեծ և փոքր մասերի, ծեփել ստանալ տարբեր առարկաներ: Երեխաները սովորել են պլաստլինը տափակեցնել, հարթեցնել խաղալով: Սովորել են ծեփել գնդիկներ, ձողիկներ, պարզ ձևի մրգեր, բանջարեղեններ, ծաղիկ, խաղալիքներ և այլն: Ծեփակերտել են հեքիաթների թեմաներով՝ երեխաների ցանկությամբ:

Երեխաների համար անփոխարինելի տեղ են գրավում հեքիաթներն ու պատմվածքները, որոնց հիման վրա բեմադրվել են երեխաների սիրված հեքիաթների մի շարք տիկնիկային ներկայացումներ՝Պապն ու շաղգամը, Պոչատ աղվեսը, Անբան Հուռին, Աղվեսն Ու Ագռավը, Չարի վերջը և այլն:

Հարստացվել են աշխատանքային կենտրոնների նյութերը, մեթոդկաբինետը համալրվել է նոր գրականությունով և մեթոդական նյութերով:

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Ծնողները ակտիվոր մասնակցել են մանկապարտեզի կյանքին, ընդգրկվել են տարբեր աշխատանքի ձևերում և միջոցառումներին: Հաճախակի նրանց համար կազմակերպվել է քննարկումներ, կլոր սեղաններ, հարցաթերթիկների հիման վրա մշակվել է միջոցառումներ, որոնք օգնել են ծնողներին ծանոթանալու երեխաների դաստիարակության, ուսուցման ժամանակակից հիմունքներին, նրանց դպրոցի նախապատրաստման խնդիրներին:

2019թ. անցկացվել է 4 ընդհանուր ծնողական ժողով, որտեղ ծնողներն իրազեկվել են մանկապարտեզի կանոնադրությանը և նոր ծրագրային պահանջներին/առկա է արձանագրությունները և զեկուցագրերը/

- Կնքվել է պայմանագիր նոր ընդունված երեխաների ծնողների հետ:
- Ընտրվել է ծնողկոմիտե և նախագահ: